

<https://doi.org/10.46991/hc.2024.21.2.073>

Application and Feasibility of the Soviet Armenian Experience in Integrating Repatriates in the Republic of Armenia

Lilit Makaryan

<https://orcid.org/0009-0008-4696-1962>

Associate Professor at YSU Chair of Armenian History, PhD in History

l.makaryan@ysu.am

Keywords: Immigration, repatriation, Committee to aid Armenia, Compatriot Unions, emigrants, integration.

The first caravans of Armenian emigrants who survived the Genocide and settled in foreign countries arrived in Soviet Armenia in 1921-1922. The first successful attempt at repatriation was organized from 1921 to 1936. The authorities of Soviet Armenia spared no effort in accepting, settling, providing housing, employment, and education to the immigrating compatriots, as well as integrating them into society. To organize the immigration process, raise the prestige of Soviet Armenia in the Diaspora, and strengthen ties with the homeland, state structures were established under the government during the Soviet period, fully engaged in pro-patriotic work.

Through our research, we have presented the successful experience of organizing repatriation and integration during the Soviet period, highlighting their applicability and feasibility in the Republic of Armenia. We have also identified the factors hindering these efforts through a survey.

Հայրենադարձների ինտեգրման Խորհրդային Հայաստանի փորձի կիրառումն ու հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում

Լիլիթ Մակարյան

ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ.

Հիմնաբառեր՝ ներգաղթ, հայրենադարձություն, Հայաստանի օգնության կոմիտե, Հայրենակցական միություններ, գաղթական, ինտեգրում:

History and Culture Vol.-21(2), 2024, pp. 73-85.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Received: 25.09.2024

Revised: 09.10.2024

Accepted: 20.11.2024

© The Author(s) 2024

Application and Feasibility of the Soviet Armenian Experience in Integrating Repatriates in the Republic of Armenia
Հայրենադարձների ինտեգրման Խորհրդային Հայաստանի փորձի կիրառումն ու հնարավորությունները
Հայաստանի Հանրապետությունում

Ցեղասպանությունից մազապուրծ և արտասահմանյան երկրներում հաստատված գաղթական հայերի առաջին քարավանները Խորհրդային Հայաստան հասան 1921-1922 թթ.: Հայրենադարձության առաջին և հաջողված փորձը կազմակերպվեց 1921-1936թթ. ընթացքում: Խորհրդային Հայաստանի իշխանությունները ջանք չխնայեցին ներգաղթող հայրենակիցների ընդունման, տեղավորման, կացարանով, աշխատատեղերով և կրթությունով ապահովելու, հասարակությանը ինտեգրելու ուղղությամբ: Ներգաղթի գործը կազմակերպելու, Միյունքում Խորհրդային Հայաստանի հեղինակությունը բարձրացնելու և հայրենիքի հետ կապերն ամրապնդելու համար խորհրդային իշխանության տարիներին կառավարությանն առընթեր ստեղծվեցին պետական կառույցներ, որոնք ողջ ներուժով լծվեցին հայրենանպաստ աշխատանքներին:

Մեր կողմից կատարված հետազոտությամբ ներկայացրել ենք խորհրդային տարիներին հայրենադարձության կազմակերպման և ինտեգրման հաջողված փորձը և դրանց կիրառելիությունն ու հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև հարցման միջոցով վեր ենք հանել դրանց խոչընդոտող գործոնները:

Применение опыта и возможностей в деле интеграции репатриантов Советской Армении в Республике Армения

Лилит Макарян

Кандидат исторических наук, доцент кафедры истории ЕГУ

Ключевые слова: иммиграция, репатриация, Комитет помощи Армении, Армянские земляческие союзы, беженец, интеграция.

Первые караваны армян-репатриантов, спасшихся от геноцида и обосновавшихся в зарубежных странах, прибыли в Советскую Армению в 1921-1922 г.г. Первая успешная репатриация была организована в 1921-1936 гг. Власти Советской Армении не пожалели усилий для приема, размещения и обеспечения занятостью и образованием соотечественников с целью интеграции общества. Для организации данного процесса, повышения в диаспоре авторитета Советской Армении и для укрепления связей с Отечеством, в годы Советской власти при правительстве были созданы государственные структуры, которые задействовали весь свой рабочий потенциал на благо Родины. В ходе проведенного нами исследования мы представили процесс организации репатриации в советские годы, успешный опыт интеграции, его применимость и возможности в Республике Армения, а также выявили препятствующие им факторы с помощью опроса.

* * *

Ներածություն: Հայրենադարձության առաջին և հաջողված փորձը 1921-1936 թթ. էին, երբ Խորհրդային Հայաստանի պետական աջակցությամբ՝ կառավարության առընթեր գործող Հայաստանի օգնության կոմիտեի ջանքերով իրականացվեց հայրենադարձություն: Խորհրդային հետագա տարիներին հայրենադարձության կազմակերպման համար առավել նպաստավոր պայմաններ ստեղծվեցին և կառավարությունն առավել համակարգված հրատապ լուծումներ սովեց հայրենադարձների սոցիալական, կրթական խնդիրներին: Արդի աշխարհաքաղաքական գործընթացների ֆոնին՝ հակամարտություններով լի տարածաշրջաններում սփյուռքի հայկական համայնքները ևս անմասն չեն մնում ցնցումներից, որոնք հանգեցնում են ժողովրդական տեղաշարժերի, ստեղծում հնարավորություն՝ Հայաստանի Հանրապետությունում հայրենադարձության համար: Այս հանգամանքներով պայմանավորված՝ կարևոր է ՀՀ արտաքին հավասարակշռված և ճկուն քաղաքականության իրականացումը և հայրենադարձության կազմակերպման համար ՀՀ-ում նպաստավոր պայմանների պրոպագանդումը: Խորհրդային տարիներին հայրենադարձության գործում իշխանությունների իրականացրած ծրագրերը և հաջողված փորձը օգտակար է և կիրառելի Հայաստանի բոլոր իշխանությունների գործունեության ժամանակաշրջանում:

Ներգաղթի կազմակերպումը Խորհրդային Հայաստան 1920-1930-ական թթ.: Խորհրդային տարիներին՝ հատկապես 1920-30-ական թթ. մեծ աշխատանք տարվեց հայրենադարձության գաղափարը տարածելու տեսանկյունից: Հայրենադարձության ծավալների մեծացման արդյունքը արտասահմանի հայկական համայնքներում լայն քարոզչությունն էր, որն իրականացվում էր Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ), Հայրենակցական միությունների, ՀԲԸՄ-ի և այլ հասարակական կազմակերպությունների միջոցով:

1921թ. դեկտեմբերի 20-ին Վրաստանում ՀՄԽՀ դիվանագիտական ներկայացուցիչ Հ. Սուրխաթյանը Թիֆլիսից հեռագրում է Երևան՝ Ժողկոմխորհին, որ Մեծ Բրիտանիայի ներկայացուցչի ուղեկցությամբ Բաթում է հասել շոգենավ՝ Միջագետքից իր հետ բերելով 3 հազ. հայերի: Սա փաստորեն հայրենադարձների առաջին քարավանն էր: ՀՄԽՀ ժողկոմխորհը 1921թ. դեկտեմբերի 27-ին քննարկելով Միջագետքից ժամանող հայերի նոր խմբերի ընդունելության հարցը՝ որոշում է ձմռան ամիսներին անհնարին համարել գաղթականներին Հայաստանում ընդունելը և մինչև 1922թ. գարունը ներգաղթ չկազմակերպել: Այս որոշումը բացատրվում էր նրանով, որ Հայաստանի տնտեսական վիճակը այդ ընթացքում չափազանց ծանր էր, սակավահող երկիրը սահմանափակ հնարավորություններ ուներ, զգացվում էր նաև բնակարանների խիստ պակաս: 1922թ. հունվարի 10-ին Միջագետքից Բաթում է հասնում 3 հազ. հայերից բաղկացած երկրորդ քարավանը: Հայաստան հասնելով՝ նրանք ժամանակավորապես տեղավորվում են Ղամարլուի (Արտաշատ) շրջանի գորանոցներում [Մելիքսեթյան Հ., Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը 1920-1980 թթ., էջ 83- 85]:

Ուրմիայի և Մուլդուզի գաղթականները, որ տեղավորվել էին Ղամարլուի շրջանում, ՀՕԿ-ից ստանում էին բժշկական օգնություն և այլուր: Ղամարլուի շրջանի գաղթականները կլիմայական վատ պայմաններում էին ապրում և կառավարության թույլտվությամբ համապատասխան մարմինների կողմից հնարավորություն են ստանում փոխադրվել Միլիդարայի ենթաշրջան: ՀՕԿ-ն այդ գործին օժանդակություն է ցույց տալիս 2000 փութ ցորենով [ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 54, թ. 2 շրջ.]:

Application and Feasibility of the Soviet Armenian Experience in Integrating Repatriates in the Republic of Armenia
Հայրենադարձների ինտեգրման Խորհրդային Հայաստանի փորձի կիրառումն ու հնարավորությունները
Հայաստանի Հանրապետությունում

Ներգաղթի հարցում Խորհրդային Հայաստանի իշխանությունների որդեգրած քաղաքականությունում կային նաև որոշ ընդգծված բացասական գործելաճ, որը թելադրված էր և պայմանավորված էր խորհրդային համընդհանուր համակարգային քաղաքականությամբ: Մասնավորապես Խորհրդային Հայաստանի իշխանությունները խտրական վերաբերմունք էին դրսևորում և դասակարգում էին ներգաղթող հայրենակիցներին: Ամեն ջանք գործադրվում էր, որ կուսակցական պատկանելությամբ զանգվածներին՝ հատկապես դաշնակցականներին խոչընդոտեին մուտք գործել հանրապետություն: Մասնավորապես ՀՄԽՀ Ժողկոմխորհի նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանը Հայաստանի խորհուրդների առաջին համագումարում բացահայտ հայտարարում էր, որ խորհրդային իշխանությունները ընդդիմադիր տարրերին, ինչպիսիք էին «Դարբինյանները, Օհանջանյանները, Վրացյանները» չէին ընդունելու [Մարտունի Ալ., Խորհրդային Հայաստանի ուղին, էջ 28]:

Դեռևս 1922թ. գարնանից և հատկապես 1923թ. ձմռան ընթացքում ՀՄԽՀ Հոդժողկոմատը ձեռնարկում է հողաշինարարական ծավալուն աշխատանքներ, որի արդյունքում հող է հատկացվում ոչ միայն գյուղացիական տնտեսություններին, այլև գաղթականությանը:

Հայրենադարձության աշխատանքները ավելի կանոնակարգված կազմակերպելու համար ՀՄԽՀ ժողկոմխորհի 1925թ. հունվարի 28-ի նիստում որոշվում է ստեղծել Ժողկոմխորհին կից մշտական հատուկ հանձնաժողով, որի մեջ ընդգրկվում են Ա. Մռավյանը (նախագահ), Գ. Պարզյանը, Ս. Շադունցը, Ա. Կոստանյանը և Գ. Անտելեյանը (քարտուղար), [ՀԱԱ, ֆ 113, ց.3, գ. 310, թ. 1]:

ՀՄԽՀ կառավարությունը աշխատում էր ներգաղթող հայրենակիցներին բնակեցնել ըստ կարողունակությունների և պատրաստվածությամբ: Մասնավորապես 1925թ. 4000 գաղթականներից 1000 հոգու՝ հիմնականում ծխախոտագործների, ՀՕԿ-ը 500 դեսյատին հող գնելով Երևանում՝ նրանց բնակեցնում է մայրաքաղաքում: Մնացյալ հայրենադարձներին կառավարությունը տեղավորում է Արագոյանի շրջանում, որպեսզի բամբակամշակությամբ զբաղվեն: 1925թ. աշնանը Հայաստան եկած հայրենադարձները ձմռան ամիսներին տեղավորվում են Դավալում (Արարատ) պատրաստված ժամանակավոր բնակարաններում: Հետագայում նրանց համար հիմնվում է 4 նոր գյուղ [Արագոյան, Արմաշ, Մուրենավան և Սմո, «Խորհրդային Հայաստան», 14 հունիսի 1929թ., №135, էջ 2]:

ՀՕԿ-ը և ՀԲԸՄ-ն ակտիվ համագործակցում էին հայրենադարձության կազմակերպման գործում: 1933թ. Գ. Վարդանյանի առաջարկությամբ ՀՕԿ-ը և ՀԲԸՄ-ը միասին Ֆրանսիայում հիմնում են Ներգաղթի ֆոնդի կենտրոնական մարմին: Ներգաղթի ֆոնդի նախագահ է ընտրվում ՀԲԸՄ-ի նախագահ Զարեհ Նուբարը, փոխնախագահ՝ Ալ. Իսահակյանը: Այդ նպատակի համար կազմակերպվում է նաև Փարիզի շրջանի կենտրոնական հանձնաժողով, որի մեջ ընդգրկվում են ՀՕԿ-ի, ՀԲԸՄ-ի և Հայրենակցական միությունների ներկայացուցիչները: Հանձնաժողովի նախագահը Արշակ Չոպանյանն էր: Ներգաղթի ֆոնդի կենտրոնական մարմինը Ֆրանսիայի հայաշատ քաղաքներում և թաղամասերում կազմակերպում է տեղական հանձնախմբեր: Բոլոր

տեղերում էլ ներգրավված էին ՀՕԿ-ի, ՀԲԸՄ-ի, Հայրենակցական միությունների և այլ կազմակերպությունների ներկայացուցիչները [«ՀՕԿ», Ա տարի, թիւ 9, 1933թ. հոկտեմբեր, էջ 58-59]:

ՀՄԽՀ ժողկոմխորհի 1937թ. մարտի 14-ի որոշման համաձայն ՀՕԿ-ի գլխավոր վարչությանը կից ստեղծվում է նաև շինարարական-մատակարարման գրասենյակ՝ Ներգաղթյալ անունով, որի նպատակն էր կազմակերպել արտասահմանից Խորհրդային Հայաստան կատարվող ներգաղթի հետ կապված շինարարական աշխատանքները և տեխնիկական ղեկավարումը [ՀԱԱ, ֆ. 113, ց. 4, գ. 11749, թ. 2]:

Խորհրդային Հայաստանում 1920-ականներին գործում էին 12 հայրենակցական միությունների ներկայացուցչություններ՝ Նոր Եվրոկիան, Նոր Խարբերդը, Նոր Արաբկիրը, Նուբարաշենը, Նոր Սեբաստիան: Իսկ Նոր Թոմարգան, Նոր Մալաթիան, Նոր Կամիսը, Նոր Պարտիզակը, Նոր Քոչիսարը, Դուզ Իսարը և Նոր Բուրթանիան ունեին իրենց արտասահմանյան ներկայացուցիչները, որոնք մտնում էին Սեբաստիայի հայրենակցական միության նյույորքյան կենտրոնի վարչության կազմի մեջ, իսկ համանուն ավանները համարվում էին Նոր Սեբաստիայի գյուղեր [ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 219, թ. 4]:

Վերոնշյալ հայրենակցական միությունների նյութական աջակցության շնորհիվ՝ ՀՕԿ-ի ղեկավարության ներքո հայրենագրված համերկրացիների համար Խորհրդային Հայաստանում 1920-1930-ական թվականներին հիմնվեցին ավաններ՝ Նոր Արաբկիրը, Նոր Սեբաստիան, Նոր Մալաթիան, Նոր Տիգրանակերտը, Նոր Կեսարիան, Նոր Եվրոկիան, Նոր Բյուրթանիան, Նոր Քոչիս և այլն [Մակարյան Լ., Հայաստանի օգնության կոմիտեի գործունեությունը 1921-1937 թթ., էջ, 101-110]:

Համանուն բնակավայրերում բնակեցվեցին գաղթական համերկրացիներին, որոնք հետագայում ինտեգրվեցին խորհրդահայ հասարակությանը:

Կառավարությունը, ՀՕԿ-ը և Հայրենակցական միությունները հայրենադարձության կազմակերպման հարցում որևէ քաղաքական տարաձայնություններ չունեին: Բարեխիղճ և ազգանվեր գործունեություն էին ծավալում: ՀՄԽՀ կառավարությանն առընթեր ՀՕԿ-ի բոլոր համագումարներում, այդ թվում՝ ԱՄՆ-ի և Ֆրանսիայի մասնաճյուղերի, առաջնային էր ներգաղթի հարցը: ՀՕԿ-ի ղեկավար կազմը կառավարության բարձրաստիճան պաշտոնյաներ էին: Դա վկայում էր, որ հայ գաղթականության խնդիրների լուծումը Խորհրդային Հայաստանի կառավարության առաջնահերթություններից էր և կրում էին պետական պատասխանատվություն:

1936թ. դրությամբ ՀՕԿ-ի անդամների թիվը արտասահմանում հասնում էր 10 հազարի: Օրինակ՝ միայն ԱՄՆ-ում 79 մասնաճյուղ կար՝ շուրջ 2000 անդամով [ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 251, թ. 39]:

Այս թվաքանակը խոսում փաստ է Սփյուռքում Խորհրդային Հայաստանի ներկայացվածության և Հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդման մասին:

Արտասահմանում ՀՕԿ-ի կարևոր առաքելություններից էր նաև ներհամայնքային կյանքի աշխուժացումը: Բացում էին գրադարաններ, ընթերցարաններ, մարմնամարզական միություններ, կանանց խմբակներ, կազմակերպում էին թատերական խմբեր, երգչախմբեր: Այդ ամենի արդյունքում պրոպագանդվում էր հայ գրողների ստեղծագործությունները, հայապահպանության խնդիրներին էր լուծում տրվում, ամրապնդվում էր ներհամայնքային կապերը: Դրանց աշխուժացմանը զուգահեռ ստեղծվում էր տեղական մամուլ, որը նյութեր էր հրապարակում ոչ միայն սփյուռքի համայնքների, այլ նաև միջազգային անցուղարձերի և Խորհրդային Հայաստանի մասին: Հրատարակում էին ինչպես Խորհրդային Հայաստանի, այնպես էլ արտասահմանի հայ

Application and Feasibility of the Soviet Armenian Experience in Integrating Repatriates in the Republic of Armenia
Հայրենադարձների ինտեգրման Խորհրդային Հայաստանի փորձի կիրառումն ու հնարավորությունները
Հայաստանի Հանրապետությունում

մտավորականության ստեղծագործությունները: Ձևավորվում էին կրթամշակութային հանձնաժողովներ, որոնց անդամակցում էին արտասահմանի հայկական համայնքների ականավոր մտավորականները:

Խորհրդային Հայաստանի կառավարությունը ներգաղթի քարոզչության համար ֆինանսավորում և աջակցում էր Հայաստանի ու հայերի մասին հայկական ֆիլմերի արտադրությունը և դրանց տարածումը արտասահմանի հայկական համայնքներում: ՀՕԿ-ի և Պետլուսկինոյի միջև 1924թ. նոյեմբերին և 1925թ. մայիսի 4-ին կնքված պայմանագրերով ՀՕԿ-ը հանդիսանում էր «Խորհրդային Հայաստան» և «Անուշ» կինոնկարների արտադրության գործում վերջինի գործընկերը՝ վճարելով 8000 ռուբլուց ավելի գումար: Ֆիլմի ցուցադրման մենաշնորհային իրավունքը ԽՍՀՄ տարածքում (բացի Անդրկովկասից) և արտասահմանում 3 տարի ժամկետով տրվում է ՀՕԿ-ի կենտրոնական վարչությանը: Այդ ֆիլմի միջոցով ՀՕԿ-ը արտասահմանի հայկական համայնքներում քարոզչություն էր կատարում Խորհրդային Հայաստանի օգտին: 1928թ. ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը, Ակցիոներական ընկերությունը և Հայկինոն կնքում են պայմանագիր, որով ՀՕԿ-ը գնում է նաև «Նամուս» և «Չար ոգի» ֆիլմերի՝ Ամերիկյան մայրցամաքում ցուցադրման իրավունքը [ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 17, թ. 20]:

1920-1930-ական թվականներին ՀՄԽՀ կառավարության անմիջական և հետևողական ջանքերի շնորհիվ, ՀՕԿ-ի միջոցով և Սփյուռքի հասարակական կազմակերպությունների՝ հատկապես Հայրենակցական միությունների և ՀԲԸՄ-ի աջակցությամբ հաջողությամբ իրագործեց մոտ 41-42 հազար ներգաղթացների վերաբնակեցումը Խորհրդային Հայաստանում [Մակարյան Լ., նշվ. աշխ., էջ 88-90]:

Հայրենադարձությունը և ինտեգրման գործընթացը Խորհրդային Հայաստանում Երկրորդ աշխարհամարտից հետո:

1945թ. նոյեմբերի 21-ին ԽՍՀՄ Ժողկոմխորհի որոշմամբ՝ նախագահությամբ Ի. Ստալինի, որոշում ընդունեց թույլատրել հայրենադարձությունը Խորհրդային Հայաստան [ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 74, թ. 1]: Հայրենադարձությունը կազմակերպելու աշխատանքները համակարգելու համար 1945թ. դեկտեմբերի 8-ին ՀԽՍՀ Ժողկոմխորհին կից ստեղծվեց Արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման կոմիտե, որի նախագահ հաստատվեց Բ. Աստվածատրյանը, տեղակալներ՝ Ս. Մարյանը, Ն. Մարջանյանը: Հայրենիք վերադարձածներին տեղավորելու և նրանց հատկացվելիք բնակարանային շինարարությունը ղեկավարելու համար 1946թ. փետրվարի 15-ին և ապրիլի 27-ին ՀԽՍՀ Ժողկոմխորհին կից ստեղծվեց Վերաբնակեցման վարչություն, որն ուներ նաև շինարարական գրասենյակ [Մարգարյան Ն., Հայաստանի կոմունիստական կուսակցության և կառավարության միջոցառումները սփյուռքահայերի հայրենադարձությունը նախապատրաստելու ուղղությամբ 1946-1948թթ., Բանբեր Երեանի համալսարանի, Երևան 1983, N 1, էջ 154]:

Այս ժամանակահատվածը բարենպաստ էր հայրենադարձության կազմակերպման համար, քանի որ Խորհրդային Միությունը որպես ֆաշիզմին հաղթանակած պետություն հավատ էր ներշնչում: Նպաստող հանգամանք էր նաև Երկրորդ աշխարհամարտից հետո սոցիալ-տնտեսական ճգնաժամը, որը ծանր կացության մեջ էր դրել Սփյուռքահայերին: Նշված

հանգամանքներին գումարվեց նաև այն, որ հետպատերազմյան շրջանում մի շարք երկրներ ծանր վիճակում էին, օրինակ՝ Հունաստանը, որտեղ քաղաքացիական պատերազմ էր [Հայրենադարձների փորձն ու ինտեգրումը Հայաստանում. Խոչընդոտներ և հնարավորություններ, Երևան 2014, էջ 21]:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հայրենիք-սփյուռք հարաբերություններում անջրպետ չկար, կարելի է ասել, որ հաղթահարված էր: Խորհրդային հասարակությունը ներգաղթողներին ընդունեց գրկաբաց, իսկ կառավարությունն ամեն ինչ արեց ապահովելու սեփական օջախներ, մասնագիտական աշխատանք և կրթություն ստանալու լիակատար պայմաններ: 1946թ. ներգաղթի արդյունքում ժամանաած հայրենադարձները տեղաբաշխվեցին 32 քաղաքներում և շրջաններում [Մելիքսեթյան Հ., նշվ. աշխ., էջ 214-217]:

Հայրենադարձներն իհարկե այլ կերպ էին պատկերացնում Խորհրդային Հայաստանը, ինչ-որ առումով հիասթափություններ կային առաջարկվող պայմաններին: Սակայն հայրենիքում հաստատվեցին տասնյակ հազարավոր կարող ուժեր, որոնք լծվեցին պետականաշինության գործընթացին:

1946թ. վերջերին Ներգաղթող քարավաններն ընդունելուց հետո ՀԿ(բ)Կ Կենտկոմը և ՀԽՍՀ Մինիստրների խորհուրդը կազմեցին հատուկ բրիգադներ՝ հայրենադարձների վիճակը մանրամասն ուսումնասիրելու համար, որի նպատակն էր որքան կարելի էր ճիշտ պատկերացում կազմել հայրենադարձների իրական վիճակի մասին և մշակել համապատասխան միջոցառումներ խնդիրները լուծելու համար: Որոշ ժամանակ անց ՀԿ(բ)Կ Կենտկոմի և կառավարության հանձնարարությամբ Ներգաղթի կոմիտեն և վերաբնակեցման վարչությունը կազմակերպեցին համապատասխան սովետների գործկոմների նախագահներից, կուսակցության քաղկում-շրջկոմների երկրորդ քարտուղարներից և ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի ներկայացուցիչներից բաղկացած հանձնաժողովներ, որոնք մանրամասն ուսումնասիրում էին բոլոր հայրենադարձների կենցաղային և աշխատանքային պայմանները [Մելիքսեթյան Հ., նշվ. աշխ., էջ 218-219]: Կառավարությունը տալիս էր արտոնություններ: Մասնավորապես ՀԿ(բ)Կ Կենտկոմի և ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի 1946թ. հուլիսի 9-ի համատեղ որոշումների համաձայն գյուղական վայրերում բնակություն հաստատած հայրենադարձները 2-5 տարի ժամանակով ազատվում էին գյուղատնտեսական հարկից, մյուսները՝ անգավակության, եկամտի և այլ հարկերից: 1946թ. հոկտեմբերի 8-ին ՀԽՍՀ Մինիստրների խորհուրդը որոշում ընդունեց ներգաղթած բազմազավակ և միայնակ մայրերին պետական նպաստ նշանակելու և վճարելու, հայրենադարձներին թոշակավորելիս արտասահմանում աշխատած ժամանակամիջոցը նույնպես որպես ստաժ հաշվի առնելու մասին: Բնակֆոնդի համար 28 շրջաններում 40 միլիոն ռուբլի հատկացրեց կառավարությունը [Մելիքսեթյան Հ., նշվ. աշխ., էջ 223]:

1948թ. Արարատի շրջանի Նովրուզլուի գյուղխորհրդի գործկոմի նախագահության նիստի արձանագրությունից պարզ է դառնում, որ հայրենադարձները վարկ էին ստանում նաև անասուններ ձեռք բերելու համար: [Սուրիասյան Հ., Ղազարյան Գ., Խորհրդային Հայաստանում հայրենադարձների տեղավորման և ինտեգրման գործընթացի պատմությունից (1946-1948 թթ.), Պատմա-բանասիրական հանդես, Երևան 2019թ., էջ 161]:

Application and Feasibility of the Soviet Armenian Experience in Integrating Repatriates in the Republic of Armenia
Հայրենադարձների ինտեգրման Խորհրդային Հայաստանի փորձի կիրառումն ու հնարավորությունները
Հայաստանի Հանրապետությունում

Արտասահմանյան մի շարք երկրներից լուրջ դժվարություններ էին առաջացել հայրենադարձների թոշակավորման փաստաթղթերի հետ կապված: Մինիստրների խորհուրդը թույլատրում է 1962թ. հայրենիք վերադարձած քաղաքացիներից բացառության կարգով նույնիսկ չօրինականացված փաստաթղթեր ընդունել, ինչպես նաև վկայությունների հիման վրա որոշել պահանջվող աշխատանքային ստաժը և սահմանված կարգով լուծել նրանց կենսաթոշակների հարցը [Մեխքսեթյան Հ., նշվ. աշխ., էջ 272-273]: Խորհրդային Հայաստանի կառավարության այս քաղաքականությունը և կիրառված հրատապ միջոցներն հատկապես օրինակելի են Արցախի Հանրապետությունից բռնի գաղթած և Հայաստանում ապաստան գտած արցախահայերի՝ կառավարության սոցիալական ծրագրերից օգտվելու ընթացքում հաշվի առնելու տեսանկյունից:

ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի 1965թ. հուլիսի 7-ին որոշում ընդունեց բնակարանով ապահովել 1946-1962 թթ. ժամանակամիջոցում հայրենիք եկած և դեռևս բնակարանի կարիք ունեցող բոլոր հայրենադարձներին: 1966թ. դրությամբ ՀԽՍՀ Մինիստրների խորհուրդն արձանագրեց, որ 1962թ.-ից հետո եկած բոլոր հայրենադարձներն ապահովվել են բնակարաններով, աշխատունակները հիմնականում ապահովված են մասնագիտության աշխատանքով, ձեռնարկություններում հետևողական աշխատանք է տարվում նրանց որակավորումը բարձրացնելու և վերավորակավորելու ուղղությամբ, դպրոցահասակ բոլոր երեխաներն ընդգրկված են հանրակրթական դպրոցներում: 1966թ. ապրիլի 1-ին ՀԽՍՀ Գյուղատնտեսական մինիստրությանը հանձնարարվեց հայրենադարձներին ապահովել տնամերձով, սերմերով և տնկանյութերով, Լուսավորության մինիստրությանը հանձնարարվում է բացել լրացուցիչ դասարաններ և միջոցներ ձեռնարկել՝ հասակավոր բնակչության անգրագիտությունը վերացնելու ուղղությամբ: Երկու տարով հայրենադարձները ազատվելու էին զիջերօթիկ դպրոցներում ընդգրկված երեխաների համար վարձ վճարելուց: 1964թ. ստեղծված ՀԽՍՀ Սփյուռքի կոմիտեի կազմում ընդգրկվեց մոտ 200 մտավորական: Կաթողիկոսը ևս մասնակցում էր հիմնադիր ժողովին [Մեխքսեթյան Հ., նշվ. աշխ., էջ 273-275, 366-367]: Նշանավոր նկարիչ Մարտիրոս Մարյանը, ինչպես ՀՕԿ-ի աշխատանքներում էր ակտիվ ներգրավված, իր մասնակցությունը բերեց նաև այս կառույցի աշխատանքներին:

1969թ. Սփյուռքի կոմիտեն Երևանում կազմակերպեց նկարիչներ Բյուզանդ Թոփալյանի և Ռիշար Ժերանյանի (Ֆրանսիա), Մարտա Մնդիկյանի (Իտալիա), Մալբի Մավյանի (ԱՄՆ), կանադահայ հայտնի լուսանկարիչ Արթին Գավուրի գեղանկարների, գրաֆիկական գործերի և գունավոր լուսանկարների ցուցահանդեսները, որոնք լայն արձագանք գտան և հայրենիքում, և Սփյուռքում [Մեխքսեթյան Հ., նշվ. աշխ., էջ 417, 419]:

Խորհրդային Հայաստանի բուհերն ու տեխնիկումները 1980-ականների սկզբին տարեկան ընդունում են մինչև 120 սփյուռքահայ երիտասարդներ, մեծ տեղ էին տալիս մանկավարժական կադրերի պատրաստման գործին: Յուրաքանչյուր ուսանողի համար տարեկան ծախսը կազմում էր նվազագույնը 2500 ռուբլի [Մեխքսեթյան Հ., նշվ. աշխ., էջ 429]:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում սփյուռքահայ արվեստագետների, երգի-պարի անսամբլների, թատերական խմբերի

Ելույթների կազմակերպումը հայրենիքում, ինչպես օրինակ՝ Շառլ Ազնավուրի, Ռոզի Արմենի, Լուսին Ամարայի և ալոց մենահամերգները:

Հայրենադարձության և ինտեգրման խոչընդոտներն ու հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում:

Հայաստանի անկախացումից ի վեր Սփյուռքի և հայրենադարձների հարցերով զբաղվել են ինչպես տարբեր հասարակական կազմակերպություններ, այնպես էլ կառավարության կողմից ստեղծված ստորաբաժանումներ: Պետական մակարդակով Սփյուռքի հետ տարվող աշխատանքները համակարգվել են ՀՀ ԱԳՆ-ի ենթակայությամբ տարբեր ժամանակներում գործող ստորաբաժանումների՝ Սփյուռքի վարչության, Սփյուռքի հետ կապերի գործադիր քարտուղարության, Սփյուռքի հետ կապերի գործակալության, Սփյուռքի հետ կապերի պետական կոմիտեի միջոցով: ՀՀ ԿԳՆ ենթակայությամբ ևս ստեղծվել էր նաև միջազգային համագործակցության և սփյուռքի վարչություն, այժմ՝ ԿԳՄՄՆ Արտաքին կապերի և սփյուռքի վարչություն: 2008թ. բացվեց ՀՀ Սփյուռքի նախարարությունը, իսկ արդեն 2019թ.-ից վարչապետի աշխատակազմին կից գործում է Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը: Վերջինիս կազմում 2023թ. ձևավորվել է նաև Հայրենադարձության և ինտեգրման կենտրոնը՝ գործընթացն ավելի դյուրինացնելու, հայրենադարձվող մեր հայրենակիցների հիմնախնդիրներին արագ արձագանքելու և լուծումներ առաջարկելու նպատակով:

Հայրենադարձների ինտեգրման խոչընդոտների ու հնարավորությունների վերաբերյալ ավելի առարկայական պատկերացում ունենալու, խնդիրները վեր հանելու նպատակով մեր կողմից հայրենադարձված երիտասարդների, այդ թվում՝ ուսանողների շրջանում անցկացրել ենք առցանց հարցում (սնուշը տե՛ս հավելվածում), որին մասնակցել են 24 հոգի: Հարցվածները իրենց և իրենց ընտանիքներին հուզող գրեթե միևնույն խնդիրներն ու խոչընդոտներն են մատնանշում: Մասնավորապես բնակֆոնդի անվճար ապահովման պետական ծրագրերի բացակայություն, հիփոթեքային վարկային ծրագրերի անհասանելիություն՝ ոչ բավարար աշխատավարձի, աշխատանքային ստաժի, աշխատանքի բնույթի, երաշխավորության և այլ փաստաթղթային պահանջներին չհամապատասխանության խոչընդոտներով պայմանավորված: Հարցվածներն ու նրանց ընտանիքի անդամները աշխատանք գտնում են հիմնականում մասնավոր ոլորտում: Ուսանողները բարձրաձայնում են, որ բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելուց, մրցույթին մասնակցում են ՀՀ քաղաքացի դիմորդների հետ՝ հավասար հիմունքներով: Թեև սփյուռքահայ ուսանողները օգտվում են բուհերում զեղչային արտոնություններից, սակայն տարբեր բուհերում դրանք տարբեր չափերի են, թողնված են բուհերի հայեցողությանը: Այս հարցում Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը կառավարության միջոցով կարող է հասնել նրան, որ ՀՀ պետական բուհերում սահմանվի միասնական զեղչային համակարգ հայրենադարձված սփյուռքահայ ուսանողների համար կամ իրականացվի մասնակի, ամբողջական վարձերի փոխհատուցում՝ ուսումնական ավարտելուց հետո հայրենիքում որոշակի ժամանակ պարտադիր մասնագիտական աշխատանք կատարելու պայմաններով:

Հատկապես արցախահայության ինտեգրման գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար կարևոր է հաշվի առնել խորհրդային տարիների փորձը, երբ բացառության կարգով

Application and Feasibility of the Soviet Armenian Experience in Integrating Repatriates in the Republic of Armenia
Հայրենադարձների ինտեգրման Խորհրդային Հայաստանի փորձի կիրառումն ու հնարավորությունները
Հայաստանի Հանրապետությունում

նույնիսկ ընդունվում էին չօրինականացված փաստաթղթեր՝ միջազգային իրադրության սրման պայմաններում:

Հարցված սփյուռքահայերը, հատկապես Մերձավոր Արևելքի երկրներից, նշել են, որ տիրապետում են անզլերեն, արաբերեն, ֆրանսերեն լեզուների, բայց ինտեգրման առումով և կրթության մեջ դժվարություններ ունեն ռուսերենին չտիրապետելու պատճառով, քանի որ հանձնարարվող գրականությունը մեծամասամբ ռուսերեն է: Այս առումով Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը լայն հնարավորություններ ունի մի քանի լեզու տիրապետող հայրենադարձների ներուժը օգտագործել գիտական ուսումնասիրություններ կատարելու, հանրայնացնելու, միջազգայնացնելու, նրանց կարողությունները արտաքին դիվանագիտության ոլորտում ծառայեցնելու ուղղությամբ: Իսկ նրանց ռուսերենի խոչընդոտը վերացնելու համար դասընթացներ կազմակերպել՝ մասնավորապես այդ գործընթացին մասնակից դարձնելով և աշխատատեղեր ստեղծելով բնագաղթեցված արցախցիների համար, ովքեր բավականին լավ տիրապետում են ռուսերենին:

Ներկա իրավիճակում հայրենադարձներին, առավել ևս Հայաստանում ապաստանած արցախահայերին անհրաժեշտ է ներկայացնել պետական աջակցության ծրագրերը, մասնավոր և պետական ոլորտի կողմից առաջարկվող հնարավորությունները՝ ՀՀ աշխատաշուկայում, առկա պահանջարկը, ինչպես նաև ապահովել ռիսկերի գնահատման գիտելիքներ և հմտություն:

Ի տարբերություն խորհրդային տարիների՝ անկախ Հայաստանը ձերբազատված է կրոնական, կուսակցական կաղապարներից:

Սփյուռքի հարցերով զբաղվող գերատեսչությունները հարկավոր է ընդլայնեն իրենց ներկայացվածությունը սփյուռքում՝ համապատասխան մասնաճյուղերի կամ գրասենյակների տեսքով: Իհարկե ներկայումս Սփյուռքում ներդրվել է հասարակական հիմունքներով հանձնակատարների ինստիտուտը (ներկայում 16 հանձնակատար է նշանակված-Լ.Մ), որը տեսանելի ապագայում իր դրական արդյունքները կգրանցի, եթե նշանակված լինեն համայնքների հեղինակավոր ներկայացուցիչներ, ովքեր ունեն տարբեր հասարակական կազմակերպությունների, եկեղեցական թեմերի, կառույցների հետ հարաբերվելու հմտություններ և Հայաստանի ազգային ու պետական շահը առաջ մղելու, համազգային միասնականություն ապահովելու ձգտումներ:

Ինտեգրման խնդիրներին անդրադառնալիս՝ անհրաժեշտ նշել այն մասին, որ ինչպես խորհրդային տարիներին ներգաղթողներն, այնպես էլ ներկա հայրենադարձները, Արցախից բռնի տեղահանվածները կարիք ունեն հատկապես բնակարանային ֆոնդի: Խորհրդային տարիներին նրանց համար կառուցվեցին հավաք բնակության ավաններ, թաղամասեր: Համերկրացիների համար հավաք բնակավայրերի կառուցումը այդպիսի կարող էր սկզբնական շրջանում դիտարկվել անջրպետ՝ ինտեգրման առումով, բայց խորհրդային տարիներին հասարակության հետ տարվող պետական կրթադաստիարակչության շնորհիվ նմանատիպ խոչընդոտները հասարակության մեջ հաղթահարվեցին:

Արտասահմանում՝ հատկապես հետխորհրդային հանրապետություններում բնակվող գործարար արցախահայերի գումարների ներգրավմամբ հնարավոր է բռնագաղթված արցախահայերի համար բնակարանային ֆոնդի ստեղծումը, իհարկե առաջնային է այդ հարցում վստահության մթնոլորտի ձևավորումը, ինչը որ հաջողվեց իրականացնել Խորհրդային Հայաստանում, երբ Հայրենակցական միություններն իրենց հանգանակություններն ու նյութական միջոցները ՀՕԿ-ին վստահեցին՝ համերկրացիների համար հիմնելով բնակավայրեր, ստեղծեցին աշխատատեղեր՝ բացելով արտելներ, տարբեր արհեստանոցներ:

Հայրենադարձների հետ առցանց հարցումը փաստում է, որ նրանց վերադարձի համար կարևոր դեր ունեն ոչ միայն հայրենասիրական զգացումները, հայրենիքում ապրելու և օգտակար գործ կատարելու ձգտումը, այլև գուտ տնտեսական և սոցիալական խթանները: Հայաստանում անվտանգ ապրելու և ապահովության զգացումը, ազգային արժեքները մեր հայրենակիցների համար վերադարձի դրական կողմերն են:

Եզրակացություններ: Խորհրդային Հայաստանի հայրենադարձության և ինտեգրման հաջողված փորձը կիրառելի է անկախ Հայաստանի Հանրապետությունում, որն ունի ավելի լայն հնարավորություններ, քանի որ չկան նախկին կրոնական, կուսակցական կադապարները: Հայրենադարձների մշտական բնակության հաստատման համար անհրաժեշտ է բնակֆոնդի և աշխատատեղերի պետական հստակ ծրագրի ներդրում, սոցիալական արդարություն և հավասարություն՝ կյանքի բոլոր բնագավառներում, կրթական ծրագրերի աջակցություն:

Հայրենադարձության խթանման համար կարևոր է Մփյուռքում վստահության մթնոլորտի ձևավորումը՝ ոլորտով զբաղվող պատկան մարմինների հանդեպ, այդ գործընթացներում ներգրավվելով հեղինակավոր մտավորականների, հոգևորականների՝ հատկապես Վեհափառ Հայրերին, քանի որ սփյուռքահայությունը համախմբված է հիմնականում հայոց եկեղեցու շուրջ:

Արդյունավետության համար նախընտրելի է, որ Մփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը ընդլայնի իր գործունեության շրջանակը, մասնավորապես ֆինանսավորի գիտական աշխատանքների հետազոտությունները՝ հատկապես սփյուռքի վերաբերյալ, կազմակերպի գրականության և մամուլի տպագրություն, պրոպագանդում, սփյուռքահայ մշակույթի գործիչների ցուցադրությունների, համերգների, թատերական ներկայացումների կազմակերպում ՀՀ-ում, կինոարտադրության հիմնում, որը միջոցով կկատարվի լայն քարոզչություն, իսկ ֆինանսական հասույթները կուղղվեն համահայկական ծրագրերի իրականացմանը՝ ինչի հաջողված փորձը մենք ունենք խորհրդային տարիներին՝ ՀՕԿ-ի կողմից: Մփյուռքի հանձնակատարի գլխավոր հանձնակատարի գրասենյակը գիտության միջոցով կարող է պետության համար օգտակար արդյունք ստեղծել՝ պետպատվերի շրջանակում հիմնելով գիտահետազոտական կառույցներ, որոնք կզբաղվեն հատկապես նաև տարբեր ազգերի սփյուռքի ուսումնասիրությամբ, այդ աշխատանքներում ներգրավվելով և սփյուռքի մեր հայրենակիցների և հայրենադարձների ներուժը:

Գրականության ցանկ

ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 17, 54, 219, 251:

ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 310, ց. 4, գ. 11749:

Application and Feasibility of the Soviet Armenian Experience in Integrating Repatriates in the Republic of Armenia
Հայրենադարձների ինտեգրման Խորհրդային Հայաստանի փորձի կիրառումն ու հնարավորությունները
Հայաստանի Հանրապետությունում

ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 74:

Մակարյան Լ., 2018, Հայաստանի օգնության կոմիտեի գործունեությունը 1921-1937 թթ., Երևան:

Մարտունի Ա., 1924, Խորհրդային Հայաստանի ուղին, Թիֆլիս:

Մելիքսեթյան Հ., 1985, Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը 1920-1980 թթ., Երևան:

Հայրենադարձների փորձն ու ինտեգրումը Հայաստանում. Խոչընդոտներ և հնարավորություններ, Երևան 2014, https://tert.nla.am/archive/HAY%20GIRO/Ardy/2012-2015/hayrenadardzner_2014.pdf:

Սարգսյան Ն., 1983, Հայաստանի կոմունիստական կուսակցության և կառավարության միջոցառումները սփյուռքահայերի հայրենադարձությունը նախապատրաստելու ուղղությամբ 1946-1948թթ., Բանբեր Երեանի համալսարանի, Երևան, N 1 http://www.old.yasu.am/files/15N_Sargsyan-1534939698-.pdf:

Սուքիասյան Հ., Ղազարյան Գ., 2019, Խորհրդային Հայաստանում Հայրենադարձների տեղավորման և ինտեգրման գործընթացի պատմությունից (1946-1948 թթ.), Պատմա-բանասիրական հանդես, Երևան:

«Խորհրդային Հայաստան», 14 հունիսի 1929թ., №135:

«ՀՕԿ», Ա տարի, թիվ 9, 1933թ. հոկտեմբեր:

ՀԱՎԵԼՎԱԾ

Առցանց հարցման նմուշը

ՀԱՅՐԵՆԱԴԱՐԶՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՈՒՄ

Հարցումն իրականացվել է սփյուռքահայ երիտասարդների, ուսանողների շրջանում՝ պարզելու նրանց և նրանց ընտանիքների խնդիրները, խոչընդոտներն ու դժվարությունները Հայաստանի Հանրապետությունում ինտեգրվելու գործընթացում

1. Տարիքը
2. Սեռը
3. Ո՞ր երկրում եք ծնվել
4. Ի՞նչ դժվարությունների եք հանդիպել ՀՀ-ում կրթություն ստանալիս
5. Ի՞նչ դժվարությունների եք հանդիպել ՀՀ-ում աշխատանք փնտրելիս
6. ՀՀ-ում գործատուի կողմից հանդիպե՞լ եք խտրական կամ անհարգալից վերաբերմունքի
7. Ի՞նչ լեզուների եք տիրապետում
8. Տեղացիների հետ առօրյա շփումներում անբարյացկամ վերաբերմունքի արժանանո՞ւմ եք լեզվի տիրապետման հետ կապված
9. Ի՞նչ խնդիրների եք հանդիպում ՀՀ-ում կացության կամ քաղաքացիության իրավունքի հետ կապված

History and Culture

10. ՀՀ-ում ի՞նչ առողջապահական արտոնություններից էք օգտվում
11. Ի՞նչ խնդիրների էք հանդիպել հասարակության հետ ինտեգրման գործընթացում
12. Ո՞րն էր Հայաստան տեղափոխվելու շարժառիթը
13. Արդյո՞ք հայրենիքում մշտական բնակության նպատակով էք հաստատվել
14. Ի՞նչ խոչընդոտներ կնշեք հայրենադարձության համար
15. Ի՞նչ սպասելիքներ ունեք ՀՀ կառավարությունից